

891.99

Z-40

NOV 2011

2-40

ՀԱՅ ՕՐԻՈՐԳԱՆԵՐԻ ԿՕՄԻՏԷ

ՀԱՏՈՒԱԾՆԵՐ

ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԻՑ

•••○○○○•••



ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿ  
ՅՈՎՀ. ԹԼԿՈՒՐԱՆՑԻ  
ՊԱՂՏԱՍԱՐ ԴՊԻՐ  
ՆԱՂԱՇ ՅՈՎՆԱԹԱՆ  
ԵՆ ՈՐԻԵՆԵՐ.

Թ Ի Ֆ Լ Ի Զ  
Ցպարան Ն. Աղանեանի, Պօլից. 7  
1916

ՀԻՄՏ . 20 . 0 1

2.  
364.

9W

ՀԱՅ ՕՐԻՈՐԴՆԵՐԻ ԿՈՄԻՏԷԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Հ Ա Տ Ո Ւ Ա Ծ Ն Ե Ր

Մ Ի Ջ Ն Ա Դ Ա Ր Ե Ա Ն

ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԻՑ



Թ Ի Ֆ Լ Ի Զ  
Տպարան Ն. Մկաննանի, Պոլից. 7  
1916

10.06.2013

38396

Ազատ փաղուածֆներ Արե. Չոպանեանի խմբագրու-  
բեամբ Պարիզում հրատարակուած «Նահապետ Քուչակ»  
«Հայ էջեր» եւ «Նաղաւ Յովնաթան» աւիսասուրբիւններից:



1594-75

## ՔՈՒՉԱԿ ՆԱՀԱՊԵՏԻ ՔԱՌԵԱԿՆԵՐԻՑ

Ան առաւօտուն լուսուն ձայնն գայ գարնան ձագերուն  
Այ իմ փոքրիկ ձագեր, ձայն անուշ է քանց ամենուն.  
Չագ մի կայ՝ պուլպուլ կասեն, զինչ կասէ՝ ամենն սիրուն.  
Չայնիկն ակնճովս ընկաւ, չի դադրիր աչերս ի լալու:

Հայ իմ փոքրիկ շամամ, քո ծոցուդ, ամ, երբ տիրանամ,  
Քո ծոցդ է ի ծով նման, ծովն դեղ կասեն ի ջերման.  
Փոքրիկ մտերմիկ լինամ ու մտնում ի ծոցդ լողամ.  
Ծովերուդ ալ ի դուրս ելնում՝ ուներուդ շուքն քնանամ:

Կարմիր ու կանանչ հագնիս, գէղ նրոան հատիդ նմանիս,  
Այնժամ ինձ աղվոր թվիս երբ ի ձեր դուռն կանգնիս.  
Դուռն ալ կիսաբաց անես, ցած հայիս մանտր ծիծաղիս,  
Աչօքդ ունովդ անես, զիմ տխմար խելքս կու տանիս:

Իմ ետր բարձրագնայ լուսին, յ՞նչ կերթաս գիշերդ անհուն, 7  
Շատ յերգիք ի վար հայիս, կու տեսնես շատ կիւզէլ ի քուն, Պ.  
Եւ զկոճկիկն ալ արձակ արեր, լոյս դիպեր ի մէջ ծրծերուն,  
Շառաւիղ յերկինս տուեր, խաւարեր լոյսն աստղերուն:

Երնէկ ես անոր կուտամ որ առեր իւր եարն է փախեր,  
Ոնց որ զկամուրջն անցեր, շուրն էլեր զկամուրջն է տարեր,  
Չնիկ, եղեմնիկ եկեր զոռնուն հետքն է կորուսեր.  
Առեր ի պաղչան մտեր, ցորեկով զգնչիկն է պագեր:

Ծառայ քո գնչին մեռնիմ, որ ձերմակ է գէտ կարագ եղ.  
Երեսդ կարմիր գէտ վարդ, պռունկներդ է պագնելու տեղ.  
Օնքերդ ես ի վեր քաշել ի վրայ բերել գէտ աղեղ.  
Աչերդ է ի ծով նման, որ հազար ձուկն կայ ի լեղ:

Իմ ետր, դու յերգնիկն ի քուն, ծոցդ լոյս տար աստղներուն.  
Կամ ան դիս ծոցդ ի քուն, կամ տէսթուր տուր երթամ ի տուն.  
— Ոչ կառնում ի ծոցս ի քուն, ոչ տէսթուր տամ երթաս ի տուն.  
Հանցեղ երերուն պահեմ, մինչ որ գայ լոյսն առաւօտուն:

Ես ան հաւերուն էի որ գետինն ի կուտ չուտէի,  
Թռչի երկնօքն երթի թէ սիրոյ ակնատն չընկնէի.  
Ակնատն ի ծովուն միջին էր լարած ու ես չգիտէի  
Ամէն հաւն ոտօքն ընկեր, ես ոտօք ու թևս աւելի:

Ես ձագ ծիծեռնիկ պիտէի, զօրն ըզքո տուն մտնէի,  
Ան բարձր մօյտան չարտախդ ես ի հոն բուն մը շինէի.  
Ոնց որ մութն մթանայր, ցածնայի ծոցդ մտնէի,  
Ոնց որ լուսըն լուսանայր, բարձրանայի բունս մտնէի,  
Ես ապրճմէ խուշախ, զօրն զքո միջաց գիրկ ածէի,  
Կամ քաղցրը նռան գինի, զօրն ըզքո փարչդ պիտէի,  
Աննիր ու բերնիդ դընիր, ցածնայի դունչըդ պագնէի,  
Կամ ապրճմէ կոճակ, որ շնիցդ գիրկ ածէի:

Այս գիշեր լերանց բարձանց ծաղկունանց ի մէջն եմ ի քուն.  
Իմ եարն ի վերև գլխուս՝ կու խմէ, ես անհոգ ի քուն:  
Գլխարկս ալ ի վեր կալի, լուկ թռաւ նման կաքաւուն:  
Թևիկ շահէնի առի, լուկ հասայ ի յեզր ծովուն,  
Հասայ, չհասայ սիրուս, վայ հագար մօրս բերելոյն:

Յաշխարս ես ի ժուռ եկայ, չգըտայ ըղորդ սիրելի,  
Զխելքս ի վրաս բերի, զբազուկս արի սիրելի.  
Քանի բազուկս ի բան կենայ, շատ եղբայր ու շատ սիրելի,  
Բազուկս ի բանէ ընկնի, ոչ եղբայր, ոչ սիրելի:

Այս աստնվորիս վրայ երկու բան ողորմ ու լալի.  
Մէկ որ սիրոյ տէր լինի, մէկ որ գայ Գրօղն ու տանի:

Զիմ եարն էմանէթ կուտամ, ի վարդին մէջ պահեցէք.  
Թէ երթամ ու շուտով դառնամ, զամանաթս ի տէր հասուցէք.  
Թէ երթամ խարիպուկ մեռնիմ, վարդն ձեզ՝ զտէրն յիշեցէք:



ՏԱՂ ՅՈՎԱՆԷՍԻ ՎԱՍՆ ՍԻՐՈՅ

Ես քո սիրուն չեմ դիմանար, հալալ արա, հանսը մեռայ,  
Առ ի հետ այլ գոսկի փէտատ, եկն փորէ ինձի թուրպայ:  
Թող զիս երեն տառայպուլով, որ իմ սըրտիս բոցըն գոռայ  
Շատ մարդ ի յոյս կըրակն ընկնի, չորն երի դալարն ի վըրայ:  
Թող լրվանան ըզիս գինով, մարուպ բերեն ինձ քահանայ,  
Կանանչ տերեւըն թող պատնեն՝ տանին թողեն ի նոր պաղչայ:  
Հայ հարամի ու մարգըսպան, ճալատն ի քովդ աշկերտ կուգայ.  
Շատ դըրեր ես սիրու զընտան, դուռն ու դըրունքդ է դանարայ:  
Զսիրտս երեցիր ու սղկեցիր ու քաշեցիր յաչքդ սուրմայ,  
Իարձար զարիւնս վաթեցիր լի ոտվընիդ դըրիւ հինայ:  
Քարկոծեցէք զիս ինձորով, քաղցրը լեզուով խոցոտեցայ.  
Անուշ գինով զիս խեւ արիւր՝ որ ի ծոցըդ զնտանեցայ:  
Աս գիշեր ի յերազիս կըտըրտեցին տիքայ տիքայ,  
Գագանք արիւնս կըշտացան ու թռչունք ի լաշիս վըրայ:  
Վըրաս բերան է առիւծու, արիւնս գէտ ջուր կը բըխայ,  
Ով արիւնէս է ծարաւեր՝ թող գայ խըմէ որ լիանայ:  
Կըտըրձվորացն յոտիցն ի հող, մէկ հոգեկ մի ունիմ ֆետայ  
Իմ ճիկարս քապապ հերիք, արունս թող գինի լինայ  
Գըլուխս ամպերն ի վեր իջեր ի սրտիս լեռներուն վըրայ,  
Մաղձըն սըրտիս մըշուշ կապեր, արեան արցունքըս կու ցօղայ:  
Կերակրեցաք ի մի սեղան, ու խըմեցաք ի մի կըթխայ,  
Մէկտեղ ելաք մէկտեղ նըստաք, ան ժամանակն ուր է հիմայ.  
Ո՛ւր է դավըրդ, ո՛ւր է երգումն, որ բունեցաք զԱստուած վըկայ,  
Ի գատ ընկաք, օտարացաք, չարկամն եղև մեզ մահանայ:  
Աստուած մեր չարկըմին չար տայ, որ իւր չարովըն լիանայ,  
Բարեկամացըն տայ բարի, մեր բանն ալվայ բարի լինայ:  
Աստուած ճամբայ տայ իմ սրտիս, ծառըն ծաղկի ու կանչանայ,  
Կամ իմ սըրտիս ծառըն բուսնի, ձագըն խօսի ու ճըվըլտայ,  
Համբերելով գործք կատարի. խեւ Յովանէս, դու համբերէ,  
Ատեն լինի գայ իւր կամաւ զինչ հեռաւոր զինք համբուրէ:

ՏԱՂ ՍԻՐՈՅ

Նազրու տիւլէր, գալըմ քեաֆիր, սև աչեր, եւր, սև աչեր  
 էր չես ի գար օրիկ մի զիս հարցաներ, եւր, հարցաներ:  
 Շատ եմ քաշեր տէրտ ու դահըր, քեզ համար, եւր, քեզ համար:  
 Սպիտակ ճակատ, բարակ ուններդ է կամար, եւր, է կամար:  
 Աչերդ ծով՝ ես եղայ խեղճ նաւավար, եւր, նաւավար:  
 Դարզ եմ եղեր՝ ծովուդ եխել չեմ կարնար, եւր, չեմ կարնար:  
 Գիշեր ցորեկ քունս է հատեր յաչերուս, եւր յաչերուս:  
 Հայ անօրէն, ականջ արա քո դերուս, եւր. քո գերուս:  
 Հէքիմ կասեն քեզ, դեզ արա խոցերուս, եւր, խոցերուս:  
 Այլ չեմ կարեր ընդիմանալ կրրակոյս, եւր կրրակոյս:  
 Գիշեր ցորեկ քո սէրն արեր զիս վարամ, եւր զիս վարամ:  
 Այ անօրէն, գէմ քար չեմ որ գիմանամ, եւր, դիմանամ:  
 Քունս չիգար՝ երթամ պառկեմ քընանամ, եւր, քընանամ:  
 Երթամ պահ մի լալով ժուռ գամ՝ այլվի գամ, եւր, այլվի գամ:  
 Գիշեր ցորեկ ես քո դարդէն հառաչեմ, եւր հառաչեմ:  
 Կուզեմ գանուկ այան կանչեմ, կամաչեմ, եւր, կամաչեմ:  
 Այլ չեմ կարեր գաղտուկ ապրիլ, կու կանչեմ, եւր կու կանչեմ:  
 Այ անօրէն, դու միտք արա, գէմ քար չեմ եւր, գէմ քար չեմ:  
 Գոհ եմ քեզնէ, Յիսուս անմահ միածին,  
 Նասիպ արիւր գաղէկն ինծի դրացին:  
 Շատ խել տեսայ որ աղէկնին պահ կ'ածին  
 Յետոյ գամէնն անտէր թողին գընացին:  
 Խել ՄՏԵՓԱՆՆՈՍ դու գքեզ խելօք կու կարծես,  
 Զբբարին թողեր կամաւ ըզչարն կու գործես:  
 Զաստուած թողեր գանգէտ բոզն կ'աղաչես,  
 Զահեղ դատաստանին օրն չամաչես:



ՏԱՂԵՐ ՊԱՂՏԱՍԱՐ ԴՊՐԻ

ՏԱՂ ԱԶՆԻԻ ԵՒ ԱՆՈՒԾ

Մէկ ազնուի մի սէրըն կայ ի գըլխիս.  
 Գիշերն է յերագիս՝ ցորեկն ի սրտիս.  
 Կորուսեր եմ զիմ աննըման սիրելիս.  
 Անոր համար կու թափառիմ ի սարերն ի ձորերն:  
 Ի միտս որ գայ՝ կու թռչի խելքս ի գլխէս,  
 Յաչերս արիւն, կու բոլորի ի սըրտէս.  
 Դարիպ եմ ես որ ելեր եմ իմ երկրէս.  
 Անոր համար կու թափառիմ ի սարերն ի ձորերն:  
 Այգի եմ տընկեր ու վարդ եմ բուսուցեր,  
 Ապառաժներ կարեր ջուր եմ վազուցեր,  
 Զիմ աննըման սիրելիս եմ կորուցեր.  
 Անոր համար կու թափառիմ ի սարերն ի ձորերն:  
 Զիմ ազնիւն որ սիրոյս գրկովն եմ բարձեր,  
 Զըկանց ծովուն՝ յերանց թռչնոցն եմ հարցեր.  
 Մոլորական մաղըսկաթներն եմ դարձեր.  
 Անոր համար կու թափառիմ ի սարերն ի ձորերն:  
 Թէ հարցանեն թէ հալդ ի՞նչ է՝ հալ չունիմ,  
 Ի շատ սըգոյս պատասխանի տալ չունիմ,  
 Ի տեղի մի գաղարիլ և կալ չունիմ.  
 Անոր համար կու թափառիմ ի սարերն ի ձորերն:



## II.

## Տ Ա Ղ Ս Ի Ր Ո Յ

Զիս քո սիրոյն, ս՛վ նազելի, հովերն առեր կու մաղէ,  
 Օտարին լեզուն աւելի ցաւ եղեր զիս կու դաղէ.  
 Այս կարօտուս չի դիմացվիր՝ միշտ ըզհօգիս կու քաղէ.  
 Դէպ ի յերկիրն իմ սիրելոյն առնէր տանէր հովըն զիս հո-  
 վըն զիս,  
 Դէպ ի յայգին իմ նազելոյն փըչէր տանէր քամին զիս:

Խղճալի այն և ցաւալի թռչնակին ես նըման եմ,  
 Որ սիրոյն իմ կարմիր վարդին յարակ ի սուգ մըտանեմ,  
 Ի սար ի ձոր շրջագայիմ խնդրեմ և ոչ գըտանեմ.  
 Դէպ ի յերկիրն իմ սիրելոյն, ևն:

Սըրաթև թռչնակ լինէի՝ թըռչէի ուր կամէի,  
 Կամ ի յայգին իմ սիրելոյն փըչող քամին լինէի,  
 Թեթևիկ ամպիկ պիտէի՝ հովուն առջևն իյնէի.  
 Դէպ ի յերկիրն իմ սիրելոյն, ևն:

Այս բոցոյս թէ ծովեր կապեն, չի գիտէ իսկի մարիլ,  
 Այլ հանապազ նոր ի նորոյ ըսկըսանի ի վառիլ,  
 Զի ինքն այլ տեղ՝ հոգին այլ տեղ՝ ո՛վ կարէ կալ դադարիլ.  
 Դէպ ի յերկիրն իմ սիրելոյն, ևն.



## III.

## Տ Ա Ղ

Օ՛ր անեղ, օր անեղ, օր անեղ,  
 Յորում երկինք և երկիր տազնապաւ անցցին  
 Եւ բընութիւնք ամենայն հրդեհեալ լուծցին:

Օ՛ր անեղ, օր անեղ, օր անեղ,  
 Յորում արեգակն և լուսինըն խաւարեսցին,  
 Եւ զօրութիւնք երկնից համայն շարժեսցին:

Օ՛ր անեղ, օր անեղ, օր անեղ,  
 Յորում անեղ դատաւորն անթիւ զօրօք յերկնից եկեսցէ,  
 Եւ ամենայն որդիք մարդկան անդ հաւաքեսցին:

Օ՛ր անեղ, օր անեղ, օր անեղ,  
 Յորում արդարադատ հատուցանողն ի յանողորմ ի յաթոռ  
 Նըստեալ քննեսցէ, վայ ինձ, վայ ինձ, վայ ինձ մեղաւորիս:

Օ՛ր անեղ, օր անեղ, օր անեղ,  
 Յորում և ոչըռպէ մի ի կենաց մերոց առանց քննութեան մնասցէ,  
 Եւ ոչ կէտ մի ի գործոց առանց հատուցման իւր կայցէ.

Յորում արդարքն ի կեանս երկնից և մեղաւորքն ի տանջանս  
 մեկնեալ երթիցեն,  
 Եւ այն ի յաւիտեան, և այն ի յաւիտեանս յաւիտենից:

Ի յայնմ աւուր անեղին  
 Ողորմեա՛, Տէր, հոգւոյ իմոյ բազմամեղի:





## ՆԱՂԱՇ ՅՈՎՆԱԹԱՆԻ ՏԱՂԵՐԻՑ

### ՏԱՂ Ի ՎԵՐԱՅ ԶԱՏԿԻՆ ՀԱՅՈՑ

Յորժամ գայ պայծառ Չատիկըն Հայոց,  
Մեծ աւետիս տամք ծերոց և տղայոց,  
Ասեմք՝ Գրիստոս յարեաւ ի մեռելոց,  
Կեանք նրն շեցելոց,  
Փրկութիւն հոգւոց և Չատիկըն Հայոց,  
Գովեմք Չատիկըն Հայոց:

Ուրախանան մարդիկք, մանկունք և տղայք,  
Չարդարեալ ցընծան և պարեն կանայք.  
Խաչապաշտք խընդան, եւս առաւել Հայք,  
Որք են քրիստոնեայք.

Աւետեաց օր է Չատիկըն Հայոց,  
Գովեմք Չատիկըն Հայոց:

Վերանայ ձրմեռն և գայ ամառըն,  
Հասնի գինին և թազայ գառըն,  
Կանանչի խոտըն և ծաղկի ծառըն,  
Տերեւախառըն.

Քաղցր և անուշ է Չատիկըն Հայոց,  
Գովեմք Չատիկըն Հայոց:

Նորոգին հոգիք սուրբ յաւազանէն,  
Լոյս պայծառ բըղխէ սուրբ գերեզմանէն,  
Նայ մեզ կու փրկէ ի չար զազանէն,  
Նորին բերանէն.

Ազատարար է Չատիկըն Հայոց,  
Գովեմք Չատիկըն Հայոց:

Առեալ բահանայք խաչ՝ Աւետարան,  
Օրհնեն գերեզման, տուն և անդաստան,

Ամեն մարդ շըջի ծաղկանց բուրաստան,  
Երկիր Հայաստան.

Շընորհ աշխարհի Չատիկըն Հայոց,  
Գովեմք Չատիկըն Հայոց:

Թըռչունքըն խայտան, խօսի բըլբուլըն,  
Փայլի մանուշակ, բացւի սըմբուլըն,  
Սերմանիք ցանեն, աշխատի ցուլըն,  
Բոլոր աւուրըն.

Առատ գարուն է Չատիկըն Հայոց,  
Գովեմք Չատիկըն Հայոց.

Աղբերք յորգորին և հալին սառըն,  
Գրիստոս զենանի Աստուծոյ գառըն,  
Քահանայք երգեն երկնից բարբառըն,  
Հրեշտակախառըն.

Դրախտի նըման է Չատիկըն Հայոց,  
Գովեմք Չատիկըն Հայոց:

Նըստէք, հայրք և եղբայրք, ի մէջ չիմանի,  
Եւ խըմէք գինին վերայ սեղանի.  
Նաղաշն արէք յիշման արժանի,  
Քաղցրութեան բանի.

Քանգի նա գովեաց Չատիկըն Հայոց,  
Գովեմք Չատիկըն Հայոց:

Էին սուրբ ծընող Մարիամ միշտ կոյս,  
Ծագեաց ծընընդեամբ քո մեզ փառք և լոյս.  
Լեր բարեխօս առ յարուցեալն Յիսուս,  
Պարգեւել մեզ յոյս,

Մաքրութեամբ տօնել Չատիկըն Հայոց.  
Գովեմք Չատիկըն Հայոց:



## II.

## Տ Ա Ղ Ս Ի Ր Ո Յ

Առաւօտուց մէկ մի տեսայ զարդարած,  
Դու իմ խելքըն տարար, ես չունիմ դարար.  
Ոսկի շատ էր կապել՝ մարգարիտ շարած.  
Դու իմ խելքըն տարար, ես չունիմ դարար:

Լայն և սպիտակ ճակատ, երեսդ վարդի թեր.  
Շամալ կուռըդ մեկնէ ծաղիկ դէպ ինձ բեր,  
Քեզ դանդ ու շաքար տամ իմ ձեռքըն կեր,  
Դու իմ խելքըն տարար, ես չունիմ դարար:

Աչքերդ այնախանա, ոսկեղէն սուր այ,  
Միան արտեանունքդ կապած է թուրայ,  
Քո սէրըն կըրակ է, իմ սիրտըն՝ քուրայ.  
Դու իմ խելքըն տարար, ես չունիմ դարար:

Ունքերդդ է հիւսլ, վարսերդդ լալայ,  
Ես քո սիրուդ կուլամ կու կանչեմ նալայ:  
Մեր մէջի թշնամին անկանի բալայ.  
Դու իմ խելքըն տարար, ես չունիմ դարար:

Լեզուդ քաղցըրախօս հագորան բըլբուլն,  
Մէկ ձեռնիդ գինւոյ թաս, մէկ ձեռնիդ՝ սըմբուլն.  
Երեսիդ խալերըն կապած սիան գուլն.  
Դու իմ խելքըն տարար, ես չունիմ դարար:

Ծառի տակըն նըստեմք քաղեմք թագայ նուշ.  
Ծոցիդ եմիշներըն ես անեմ անուշ.  
Երեսիդ կու հայիմ կու մընամ բէուշ.  
Դու իմ խելքըն տարար, ես չունիմ դարար:

Ծամերդդ ոսկեթել, բօյրդ է սալվի,  
Թող ծամերդդ քո ծոցին վրայ ծալվի.  
Շատ մի թողիլ նաղաշն որ մաշվի հալվի.  
Դու իմ խելքըն տար, ես չունիմ դարար:



## III.

## Տ Ա Ղ Ս Ի Ր Ո Յ

Ասել ես թէ գարնան վախտը,  
Սիրական, աման,  
Որ բացուի մեր պաղչին վարդը  
Քեզ ցոյց կուտամ ծոցիս գարդը.  
Սիրական, աման,  
Աման, եկ պաղչէն, այս է լաւ վախտը,  
Բացուել է վարդը:

Վարդ զըրկեմ քեզ կուկոն թագայ,  
Սիրական, աման.  
Գըրեմ թըղթով սիրոյ արզը,  
Եկ պաղչէն, բեր ըրախ մաղա.  
Սիրական, աման,  
Աման, եկ պաղչէն, այս է լաւ վախտը,  
Բացուել է վարդը:

Վարդագոյն երեսդ է փայլուն,  
Սիրական, աման,

Իմ գեղեցիկ նազու խաթուն,

Ահա եղև օրհնեալ գարուն.

Սիրական, աման,

Աման, եկ պաղչէն, այս է լաւ վախտը,

Բացուել է վարդը:

Վարդագոյն երեսդ է փայլման,

Սիրական, աման,

Ինչ վարդ, ես պիւլպիւլի նրման՝

Քանի խընդրեմ, աման, աման.

Աման, եկ պաղչէն, այս է լաւ վախտը,

Բացուել է վարդը:

Վարդով գլուխըդ զարդարէ,

Սիրական, աման.

Եկ իմ խընդիրքըս կատարէ,

Ինձ այս դարտէս ազատ արէ.

Սիրական, աման,

Աման, եկ պաղչէն, այս է լաւ վախտը.

Բացուել է վարդը:

IV.

**ՏԱՂ Ի ՎԵՐԱՅ ԳԱՐՆԱՆ ԵՒ ՈՒՐԱՆՈՒԹԵԱՆ**

Յորժամ եղեւ գարուն, արեւ ծագեցաւ,

Հարաւ հողմըն հնչեաց սառըն հալեցաւ,

Երկիր կանանչացեալ ծառըն ծաղկեցաւ.

Խմենք, եղբարք, գինի, մեզ անուշ լինի.

Ածէք խմենք գինի, բանն Աստուած շինի:

Ո՛վ եղբարք, նստեալ էք ծաղկեալ ծառի տակ,

Չեռներիդ է գինի կարմիր ու յըստակ,

Գինոյ մէջն անկանի ծաղիկ ըսպիտակ,

Խմենք, եղբարք, գինի, մեզ անուշ լինի.

Ածէք, խմենք գինի, բանն Աստուած շինի:

Վաղիւրն ոչ գիտեմք թէ գինչծընանի

Մարդուս կեանքըն վայրի ծաղկի նրմանի,

Որ այսօր բացուել է, վաղիւն անցանի.

Խմենք, եղբայրք, գինի, մեզ անուշ լինի.

Ածէք, խմենք գինի, բանն Աստուած շինի:

Նոր գարուն, նոր արեւ Չատիկ շնորհագարդ,

Այսուհետև բացվի մանուշակ ու վարդ

Չայն պուլպուլի տատրակին լըսէ ամէն մարդ,

Խմենք, եղբարք, գինի, մեզ անուշ լինի.

Ածէք, խմենք գինի, բանն Աստուած շինի:

Առէք կարմիր գինի և լըցէք շուշով,

Բերէք թագայ գառըն, սինի սարփուշով,

Ղապլի փըլաւ ձըգէք մեխակով, նըշով.

Խմենք, եղբարք, գինի, մեզ անուշ լինի.

Ածէք խմենք գինի, բանն Աստուած շինի:

Թող չիման տեղ նստեմք ջուր լինի և խոտ,

Կարմիր գինին խմենք մէկըգմէկի մօտ,

Միմեանց նւիրեմք վարդ անուշահոտ.

Խմենք, եղբարք, գինի, մեզ անուշ լինի,

Ածէք, խմենք գինի, բանն Աստուած շինի:


Այլ և խաղաղութեամբ խմելն է հալալ,

Ոչ հարբիլ ոչ կոուիլ և ոչ բարկանալ.

Պարկեշտութեամբ ըմպել, սիրով գուարճանալ.


Խմենք, եղբարք, գինի, մեզ անուշ լինի.

Ածէք, խմենք գինի բանն Աստուած շինի:



1591 - ի

Նիստ քո մեղքերըդ լաց, Նաղաշ Յոզնաթան,  
Աշխարհս անցաւոր է, չէ մընացական.  
Դուք կերէք, խըմեցէք, եղբայրք պատուական,  
Եւ օրհնեցէք զԱստուած այժմ և յաւիտեան:



V.

### ՏԱԳ Ի ՎԵՐԱՅ ԳՈՒՐՋՍՏԱՆԻ ԳՕԶԱԼՆԵՐԻՆ

Գովեմ սրտիւ ուրախական  
Թիֆլիս քաղաքըն պատուական.  
Յոյժ գեղեցիկ են սիրական  
Գուրջստանայ գօզալներըն:

Ինքնագոյ ջերմեռանդ համամ,  
Մէջի խաթուններըն թամամ.  
Սիպտակ բողաղ, բոլոր շամամ,  
Վըրացտանայ արմաղաններըն:

Կարմիր երես նըման վարդի,  
Ինչպէս ծաղիկ ծաղկազարդի.  
Ուշ ու խելք կուտանին մարդի,  
Գուրջստանայ գօզալներըն:

Ղալամ ունքեր կապած կամար,  
Աչքերն վառ շամսի դամար,  
Կապեր են մուրասայ քեամար,  
Վըրացտանայ արմաղաններն:

Վարսերըն դաստայ ոլորած,  
Երեսն լուսին է բոլորած,  
Շատ մարդ է տեսած մոլորած,  
Գուրջստանայ արմաղաններն:

Տեսօք են ամեն հասարակ,  
Պօյն ու շամալն է մուքարակ,  
Բատանըն լայն, մէջքըն բարակ,  
Վըրացտանայ արմաղաններըն:

Զօրեղ ազգին պարթևական  
Զար և ժառանգ արքայական.  
Արժանի թագաւորական,  
Գուրջստանայ գօզալներըն:

Մէջլիս նըստեր սազով դամով,  
Լեզուն քաղցըր, խօսքըն համով,  
Գինի խըմեն ոսկէ շամով,  
Վըրացտանայ արմաղաններըն:

Սիրամարգի նըման քայլին, <sup>7</sup>  
Տեսողքըն զարմանան մայլին. <sup>Պ</sup>  
Աստղանըման գունով փայլին,  
Գուրջստանայ գօզալներըն: <sup>Վ</sup>

Հագել են դումաշ ու խարայ,  
Ունեն շատ դարաւաշ ծառայ.  
Խիստ են կանանչ թագայ թառայ,  
Վըրացտանայ արմաղաններըն:

Ատլազ են հաքել հաւասար,  
Մամուր վալափուշ սարէ սար,  
Ամէն պարոն են աղասար,  
Գուրջստանայ գօզալներըն:

Ես Նաղաշ եմ, մեղաց ծով եմ,  
Նոցա սիրովըն գինով եմ,  
Խապար չեմ թէ ինչպէս գովեմ,  
Վըրացտանայ արմաղաններըն:



## Տ Ա Ղ Ս Ի Ր Ո Յ

Պատկեր մի տեսի լուսնի նրման,  
Աչքերըն պայծառ արեգական,  
Ունքերըն կամար՝ խիստ պատուական.  
Կու սիրեմ, գալու՞մ, գալու՞մ,  
Ինձ մօտ կու բերեմ գալու՞մ:

Սաչերըդ ռեհան և սուսամբար,  
Ծոցէդ հոտ կուգայ մուշկի ամպար.  
Վըզէդ կախել ես հէքալ շամպար.  
Կարօտ շատ ունիմ, գալու՞մ,  
Թող մէկ համբուրեմ, գալու՞մ:

Բոլոր խալ ունիս, սիահ ծամեր,  
Մատուներդ բարակ թափած մոմեր,  
Դու քո ձեռքերն թաս մի՛ խրմեր,  
Ես կուտամ, գալու՞մ, գալու՞մ.  
Մայիլ կու մընամ, գալու՞մ:

Ծոցըդ աղբիւր է՝ երկու լուլայ,  
Վըրացու բոլոր գինու կուլայ,  
Իմ աչքերն արտասուօք կուլայ.  
Ծարաւ կու կանչեմ հանրայ, գալու՞մ,  
Ինձ ըռահմ արն, գալու՞մ:

Սըրտիդ խառնէ սամուր եախլուդ,  
Ոսկի մարջան ընկած օրթալուխ,  
Նարինջի ատլազ կարճ արխալուդ.  
Դու զըրմըզի գուլ, գալու՞մ,  
Ես շէյտայ բըլբուլ գալու՞մ:

Խաթայի գօտիկ, շապիկըդ մավ,  
Քաղցըր ծիծաղիս որպէս կաքաւ.

Ինձ մի աներ աչքաւ ունքաւ.  
Հոգիս կորցըրիր, գալու՞մ,  
Ինձ փըչացըրիր, գալու՞մ:

Մատնուժըդ կայ զըմրութ մատնի,  
Պօյըդ նրման ոսկէ շամտանի,  
Թու փարսի զըբուն նա միտանի.  
Եք բուսայ բըթէ, գալու՞մ,  
Խիստ լաւ խըրատ է գալու՞մ:

Ես սիրոյ բանի չէի խաբար.  
Մէկ օր ինձ տըւիր վարդի նուբար.  
Սիրտս վարեցիր քեզի բարեբար,  
Միտըս եմ բերում գալու՞մ,  
Ես խիստ եմ երվում, գալու՞մ:

Ձեր կըտերն ծաղիկ ես վարել,  
Խընծորի մէջըն մեխակ շարել,  
Ուղարկել ինձ շատ բարև արել.  
Դու Լէյլի ջընուն, գալու՞մ,  
Ես եղէ Մէջնուն, գալու՞մ:

Ինձ հանեցիր իմ գործ ու բանէն,  
Թամաշա կ'անեմ մեր այվանէն,  
Ձեռ թողուլ հեռանամ իմ տանէն.  
Քանի ես սաղ եմ, գալու՞մ,  
Քեզի դուժսաղ եմ, գալու՞մ:

Քո ձեռքըն մէկ գիր ես գըրել,  
Մեխակ և շաքար մէջըն լըցել,  
Ես հիւանդ էի՝ մէյլիբ գըրել,  
Ողջացայ, գալու՞մ, գալու՞մ,  
Հեշտացայ, գալու՞մ, գալու՞մ:

Ասել ես թէ նա որ նաղաշ է,  
Գիտէ որ ունքերս դարաղաշ է,

Ասէք սուրաթիս նրման քաշէ.  
Քաշել եմ, գալում, գալում,  
Մաշվել եմ, գալում, գալում:

Ասել ես՝ տես Նաղաշըն տան ա,  
Գիր ուղարկի՛ սիրտս հովանայ,  
Ծածուկ ուղարկի, մարդ չիմանայ,  
Գըրած եմ, գալում, գալում,  
Մըհրած եմ, գալում, գալում:

Գիր էի գըրում քու անուանըն  
Միտք ի անում քո սիրոյ բանըն,  
Ետնէս ուղարկեց Վախտանգ խանըն.  
Քեզ հնց մոռանամ, գալում,  
Ես հնց հեռանամ, գալում:

Ասել ես՝ Տեարեր գըրէ տաղով,  
Ծաղկէ լաջվարդ ոսկի վարաղով.  
Գըրել եմ կապել բաւթայ բաղով,  
Կուղարկեմ, գալում, գալում,  
Փափաք եմ, գալում, գալում:

Խաբար ես զրկել քո բերանէն,  
«Ասէք՝ շատ մի հեռանալ տանէն,  
Մէկ օր գալոյ եմ քո քերխանէն».  
Մէլով եմ, գալում, գալում,  
Սիրոյդ գինով եմ, գալում:

Շաբաթ օր եկիր իմ սալամըն,  
Ձեռըդ առիր տիւթի գալամըն.  
Անունըս գըրեցիր էնդամըն.  
Ինձ խեացըրիր, գալում,  
Մոլորացըրիր, գալում:

Դու եկիր, ես իմ բանըն նըստայ,  
Ասացիր՝ Այն է արըուստ ուստայ,

Որ իմ մատնումըն ծաղիկ դաստայ  
Կազմեցի, գալում, գալում,  
Մայլեցի, գալում, գալում:

Ձալում էդ ինչպէս դատաստան է,  
Կամ դիւան արա կամ ըսպանէ.  
Կ'ասեմ՝ Հէքիմ ես, ցաւըս հանէ:  
Հոգիս կու հանես, գալում.  
Խելքըս կու տանես, գալում:

Խօսըն ինձ հասաւ քո բերանին,  
Շատ բարե հասցէ Յոջնաթանին.  
Ասէք՝ խօսքըդ վըրայ իմ ջանին.  
Կարգացի, գալում, գալում,  
Խնդացի, գալում, գալում:



## VII.

## Տ Ա Ղ Ս Ի Ր Ո Յ

Նոր գարուն է, հնչեաց հարաւ,  
Իմ սիրելւոյն խիստ եմ ծարաւ,  
Այսօր տեսայ՝ խելքըս տարաւ.  
Աչքըս ելաց, խելքըս գընաց.  
Խիստ եմ կարօտ, ինսնֆ արա, երեսըդ  
բաց:

Աչքերըդ է շամսի գամար,  
Կապել ես մուրասայ քեամար.  
Քանի մէկ պագ տալոյ համար  
Ինձ պահես եաս, քարէքար տաս  
Այս գիշեր դուռըն բաց թողեմ՝ մեր  
տունըն գաս:

Ղալամ ունքերըդ կու խաղայ,  
 կու տեսնեմ սիրտըս կու դողայ,  
 Կարմիր երեսդ կու շողշողայ.  
 Բանդիւնն եմ, ինչպէս անեմ,  
 Հոգիդ սիրես, ինձ մէկ պագ տուր,  
 քեզ զուրբան եմ:

Առաւօտուց վարդ կու քաղես,  
 ինձ լաց կ'անես՝ դու ծիծաղես.  
 Թէ մեր տունն գաս՝ ինձ դօնաղ ես.  
 Հազար բարի, ինձ մօտ արի.  
 Բարև չես տալ, խաբար չեմ թէ քեզ  
 ինչ արի:

Շամամներըդ նոր է հասել,  
 Ծամերդ եկել վըրայ դասել.  
 Այսօր տեսայ՝ խելքս պակասել.  
 Կանչեմ հարա՛, ըռահմ արա՛.  
 Քեզնէ խնդրեմ որ մի անիլ ինձ ա-  
 ւարայ:

Նոր փրոված վարդի նըման ես,  
 Ափսոս որ խիստ շատ նազ կ'անես.  
 Գընաց դովրան՝ կու փոշմանես,  
 Հոգւոց հանես, իմ սուլթան ես  
 Թողեմ կ'երթամ՝ ով որ տեսնաս՝ կու  
 հարցանես:

է՛ իմ սիրամարգ, ոսկեհաւ,  
 Քաղցրախօս և նախշուն կաքաւ,  
 Մարդոյ սրտ շասես վատ և լաւ.  
 Երես անդուլ շէյտայ բըլբուլ.  
 Թող ես կանչեմ որ դուն բանվաս,  
 Ղըրմղի գուլ:

Աղէկ խալվաթ է օթաղըն,  
 Տօշամայ է արած թաղաըն,  
 Քեզ գրկելոյ էս է վախաըն.  
 Գինի պիտի, ոչ խըմում ես, ոչ բե-  
 րում ես:

Սուտ քընած ես, դու արթուն ես,  
 Գիտեմ, սապր ու դարար չունես.  
 Խապար եմ քեզ էլ միտք ունես.  
 Է՛ր նազ կ'անես՝ հոգոց հանես,  
 Իմ գըրած տաղըն կու կարգաս ու  
 սազ կ'անես:

Արի միմեանց գիր ուղարկինք,  
 Թօմաթ թահր անելըն թարկինք,  
 Տուրտ է՝ արի մէկ տեղ պառկինք,  
 Որ տաքանանք գինովանանք,  
 Սերկէիլ մազայ պէտք կուզայ՝ ծոցըդ  
 բանանք:

Յաւոտ սիրոյդ ես հիւանդ եմ,  
 Ես քան զքեզ տարտիմանտ եմ.  
 Նազը՛ւ, ես սիրտըս փնջ քանդեմ.  
 Սիրական ես, պատուական ես.  
 Մաթ կու մնամ թէ էր նահախ ինձ  
 կու սպանես:

Ես մայիլ եմ ծով աչքերիդ,  
 Սուսամբար կայ մէջ վարսերիդ.  
 Կու նայիմ խալ խալ պատկերիդ.  
 Ապուշ մընամ, ձեռաց գընամ,  
 Ծիծաղելով աչօք կ'անես՝ կու գար-  
 մանամ:

Ահա գարուն, եկա Մարտըն,  
 Կու շատանայ սիրոյ տարտըն,  
 Մէջ կ'ընկի փախիլ նամարդն.  
 Լաւ իմացիր, դայիմ կացիր,  
 Քո խօսքըն ինձ հետ մէկ արա, ուրա-  
 խացիր:

Լաւ է քո պարոն կենդան չի,  
 Քեզ տեսնողըն հնց ամանչի.  
 Քանի քո ըսկեսուր տան չի,  
 Եկ այվանըն, բեր սեղանըն,  
 Քեզ հետ խըմի տողեր կանչի Յով-  
 նաթանըն:



### ՏԱՂ ՍԻՐՈՅ

Սէրըն սիրով պիտի, դէմ չպիտի ճորով.  
 Քեզ ասեմ ինձ լըսէ, կարմիր ու ճերմակ,  
 Ես լալով ժուռ կուգամ, դու ծիծաղելով:

Ենք վարդ ու մանուշակ դու անուշահոտ,  
 Ե՛լ կամկար քալելէն երթանք մեզի մօտ.  
 Դու մարդ ես ըսպաներ՝ ձեռվիդ արիւնոտ.  
 Քեզ կ'ասեմ՝ ինձ լըսէ, կարմիր ու ճերմակ,  
 Ես լալով ժուռ կուգամ, դու ծիծաղելով:

Այսօր գարունն եկեր՝ ամիսն է Մայիս,  
 Այդ քո ծով աչերովդ խոլոռ կու նայիս.  
 Երբոր ճօճաս քայլես՝ խելքըս կու տանիս.  
 Քեզ ասեմ՝ ինձ լըսէ, կարմիր ու ճերմակ,  
 Ես լալով ժուռ կուգամ, դու ծիծաղելով:

Երեսըդ կարմիր է գետ կաքուռ արիւն.  
 Իմացա՛ր, խեւ եղայ ես ի քո սիրուն.  
 Քանի մէկ կու պահես դու զիս երերուն,  
 Քեզ ասեմ ինձ լըսէ, ևն.:

Աչվընիդ քո թուխ է, ընքվիդ է կամար,  
 Երեսըս լոյս կուտայ քան զշամս ու դամար,  
 Դու մի մեռնիր, մեղք ես, մեռնիմ քեզ համար.  
 Քեզ ասեմ ինձ լըսէ, ևն.:

Երեսըդ լոյս կուտայ գետ ըզարևին,  
 Խնձոր ես՝ կու փայլիս ներքև տերևին,  
 Քեզնէ գատիլն ինձի մեռնիլ կ'երևին.  
 Քեզ ասեմ, ինձ լըսէ, ևն.:



Ծոցըդ զըզած բամպակ ճերմակ քնքուշ է,  
Պըռկըններդ շաքար շարբաթ ու նուշ է.  
Անտի կու սիրեմ գքեզ լեզուդ անուշ է.  
Քեզ ասեմ, ևն.:

Աչվերոյդ կու ճանաչեմ որ սիրոյ տէր ես,  
Թէ պագ մի այլ չի տաս՝ նա մեղաց տէր ես  
Գիտեմ որ հօր և մօր՝ ազգերու տէր ես,  
Քեզ ասեմ, ևն.:

Աջաբ ես քեզի մեղքըդ չեմ ի գար.  
Երբ կոնակիդ վրայ կարմիրըդ հագար,  
Անկաւ խելքս ու զընաց՝ այլ վերայ չի գար.  
Քեզ ասեմ, ևն.:

Ծառայ լինիմ, եւր, քո սև սև աչվերոյդ,  
Ա՛ն դու զիս ըզգերիս ի մէջ ծըծերոյդ,  
Գիտեմ որ կու մեռնիմ ես ի քո սիրոյդ,  
Քեզ ասեմ, ևն.:

Հոգի, դու զէդ բաղըը լուսին բոլորեալ,  
Ծամերդ ի յուսդ ի վեր իջեալ ոլորեալ,  
Երբ որ ի յիս նայիս աչօք խոլորեալ,  
Քեզ ասեմ, ևն.:

Հայ քաֆիր իմ հալըս դեռ չես իմացեր,  
Ես այլ, ամ, քո սիրոյն հնց եմ դիմացեր,  
Քեզնէ ի գատ մարդոյ հոգի չեմ ասեր.  
Քեզ ասեմ, ևն.:

Ղարիբուկ եմ եկեր ես ի ձեր գեղին,  
Երեսըս կու շըփեմ ոտիցըդ հողին,

Հիւանդ եմ քո սիրուն՝ դարձեր եմ դեղին,  
Քեզ ասեմ, ևն.:

Ղարիբ ՄԿՐՏԻՉՆ գիւր եարն է գովեր.  
Իւր սև աչվըներն նըմանի ծովեր,  
Բարակ միջկունք ունիս, եւր, ճօճան թևեր,  
Քեզ ասեմ, ևն.:



ԼՈՒՍՆԵԱԿՆ ԱՆՈՒՇ

Լուսնեակն անուշ հոփն անուշ,  
 Շինականի քունն անուշ.  
 Ծագեց լուսնեակըն երկնից  
 Հովրւի փողն էր անուշ:  
 Հօտաղ եղներ կարածայ,  
 Մաճկալ պառկեր՝ քունն անուշ.  
 Զղզղուն քամին կը փչէ  
 Ծովային հոփն էր անուշ:  
 Հաւքերը թառան իրանց բուն  
 Բլբուլի տաղն էր անուշ.  
 Անմահական հոտ բուրէր  
 Քաֆուր վարդի հոտն անուշ:



Ց Ա Ն Կ

1. Քույակ Նահապետի քառեակներից . . . . .	5
2. Տաղ Յովնաննիսի վասն սիրոյ . . . . .	7
3. Տաղ Սեփանոսի վասն սիրոյ . . . . .	8
Տաղեր Պաղտատար դպրի	
4. Տաղ ազնիւ և անուշ . . . . .	9
5. Տաղ սիրոյ . . . . .	10
6. Տաղ՝ Օր. ահեղ . . . . .	11
Նաղաւ Յովնաքանի տաղերից	
7. Յորժամ գայ . . . . .	12
8. Առաւօտուց մէկ մի տեսայ . . . . .	14
9. Ասել ես թէ գարնան վախտը . . . . .	15
10. Տաղ ի վերայ գարնան . . . . .	16
11. Տաղ ի վերայ Գուրջատանի գօղարներուն . . . . .	18
12. Պատկեր մի տեսի լուսնի նման . . . . .	20
13. Նոր գարունն է հնչեաց հարաւ . . . . .	23
14 Սէրն սիրով պիտի . . . . .	27
15. Լուսնեակն անուշ . . . . .	30



R 2/88

U T O

*[Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page]*

1912 թ. Դեկտեմբերի 19-ին  
Կոմիտասի Գրադարան  
Կոմիտասի Գրադարան  
Կոմիտասի Գրադարան  
Կոմիտասի Գրադարան

1912 թ. Դեկտեմբերի 19-ին

28 թ.:

→ 30 կողմ չափում

ԳԻՆՆ Է 30 ԿՈՂ.

Պանեաթը՝ Հայ Օրիորդների Կոմիտեի գրասենեակ  
Թիֆլիս, Լերմոնտովսկայա ւլ., Դ. № 12.

ՀՀ Ազգային գրադարան



NL0345813

38396